Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2019թ. սեպտեմբերի 16-19-ը, Դանիա, Կոպենհագեն

4. Հրավիրող կողմը.

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Այցի նպատակն էր մասնակցել ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի 69-րդ նստաշրջանին: Այս նստաշրջանին մասնակցությունը կարևորվում էր նրանով, որ այս տարի Հայաստանն առաջին անգամ ներկայացրել էր իր թեկնածուին՝ ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի տնօրենի ընտրությանը մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառման շրջանակներում քննարկվեցին բնակչության առողջությանն ու բարեկեցությանը սատարող «Առողջություն 2020» եվրոպական քաղաքականության

սկզբունքների վրա հիմնված մինչև 2030 թվականը կայուն զարգացման բնագավառում օրակարգի ճանապարհային քարտեզի իրականացման, ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի կայուն զարգացման նպատակով հանրային առողջապահության բարելավման հարցերը, 2020-2021թթ. ֆինանսական բյուջեն, առողջապահության ֆինանսավորման նոր մոտեցումները, հանրային առողջապահության համակարգերի պատրաստվածության մակարդակի բարձրացման նպատակով գործողությունների ծրագիրը:

Անդրադարձ արվեց նաև ԱՀԿ նախորդ նիստից հետո վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, հանրային առողջապահության, առողջապահության ֆինանսավորման բարելավման և այլ ուղղություններով երկրների կատարած աշխատանքին, դրանց արդյունքներին ու հեռանկարներին առաջիկա տարիների համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի ընթացքում երկկողմ հանդիպումներ տեղի ունեցան Չեխիայի առողջապահության և Բելգիայի սոցիալական հարցերի և հանրային առողջության նախարարների հետ: Քննարկվեցին ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի տնօրենի ընտրությանն առնչվող հարցեր: Այս պաշտոնում Հայաստանը պատմության մեջ առաջին անգամ ներկայացրել էր իր թեկնածուին: Բացի այդ, նաև ՀՀ առողջապահության նախարարի թեկնածության հայտ էր ներկայացվել ԱՀԿ Մշտական կոմիտեի անդամության համար: Մասնակից երկրների ներկայացուցիչների հետ քննարկվել են նաև հետագա երկկողմ համագործակցության ուղղությունները, ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ համագործակցություն սկսելու շուրջ:

Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը՝ ներկայացնելով Հայաստանի առողջապահության համակարգի բարեփոխումներն ու անելիքները, ինչպես նաև անդրադարձ արվեց ԱՀԿ-ի վերափոխմանը և ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի համար դրա հետևանքներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ԱՀԿ անդամ 53 երկրի ներկայացուցիչների քվեարկության արդյունքում Հայաստանը՝ ի դեմս առողջապահության նախարարի, ընդգրկվել է ԱՀԿ Մշտական կոմիտեի կազմում, որը կգործի առաջիկա 3 տարիներին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ԱՀԿ անդամ պետությունների ներկայացուցիչները ջանքեր են ներդնելու ստանձնած բանավոր պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցող կողմերի միջև ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

2019թ. սեպտեմբերի 25

X _____